ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Սեպտեմբերի 21-ին, կիրակի օրը, ժամը 17-ին, պատգամավորությունը հանդիսավորապես այցելեց Ծիծեռնակաբերդում հայ նահատակաց հուշարձան և ծաղիկներ դրեց: Ապա պատվիրակության անդամները առանձին-առանձին խմբերով իրենց մայրենի լեզվով հոգեհանգստյան մասնավոր կարգ կատարեցին հայ բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար:

Երեկոյան ժամը 19.30-ին պատվիրակությունը Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում ներկա եղավ Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի ներկայացմանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆՈՒՄ

Սեպտեմբերի 22-ին և 23-ին, երկուշաբթի և երեքշաբթի օրերին, պատվիրակության անդամները այցելեցին Մայր տաճարի թանգարան, Վաղարշապատի պատմական վանքերը, եղան Գառնիում, ս. Գեղարդ վանքում, այցելեցին Էրեբունի թանգարան և պետական պատկերասրահ, եղան Բյուրականի հայրապետական ամառանոցում և մայրաքաղաքի այլ տեսարժան վայրերում:

Սեպտեմբերի 23-ին, երեքշաբթի օրը, պատվիրակության բոլոր անդամները հրաժեշտ տվեցին Մայր Աթոռին լավագույն և անմոռանալի տպավորություններով:

Սուրբ Էջմիածնում համաօրթոդոքս սույն խորհրդակցության գումարման առթիվ Մայր Աթոռի դիվանի կողմից հայ մամուլին տրվեց հետևյալ հաղորդագրությունը.

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի նախաձեռնությամբ և Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով սույն թվականի սեպտեմբերի 16—21-ը Մայր Աթոռ ս. Էջմիածնում գումարվեց համաօրթոդոքս խորհրդակցություն:

Խորհրդակցությանը մասնակցում էին Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքության, Ռուսաստանի, Վրաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սերբիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի, Կիպրոսի, Հնդկաստանի, Հունաստանի, Եթովպիայի և ԱՄՆ-ի օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչները:

Ժողովին մասնակցում էր նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատվիրակությունը:

Համաօրթոդոքս սույն խորհրդակցությանը մասնակցում էին 33 ներկայացուցիչներ, այդ թվում նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Ժենևի կենտրոնի ղեկավար անձնակազմի անդամներ և խորհրդականներ:

Խորհրդակցության գլխավոր թեման էր՝ «Խոստովանել Քրիստոսին այսօր եկեղեցու ծիսական կյանքի միջոցով»:

Սեպտեմբերի 17-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին,

սկսվեց խորհրդակցությունը Մայր տաճարում կատարված էկումենիկ աղոթքով:

Ժամը 10-ին բոլոր պատգամավորները Վեհարանում ընդունվեցին Հայոց Հայրապետի կողմից: Նորին Սրբությունը ողջունեց հյուրերի ներկայությունը հայ ժողովրդի հոգևոր կենտրոն ս. Էջմիածնում, շեշտեց Մայր Աթոռում գումարվող սույն խորհրդակցության կարևորությունը ԵՀԽ-ի առաջիկա 5-րդ համագումարի նախապատրաստության կապակցությամբ:

Հանուն պատգամավորության Հայոց Հայրապետին ուղղված շնորհակալական ջերմ խոսք ասաց ԵՀԽ-ի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի տնօրեն դոկտ. Էմիլիո Կաստրոն:

Ժամը 10.30-ին Վեհարանի հանդիսության դահլիճում Հայոց Հայրապետի աղոթքով տեղի ունեցավ պաշտոնական բացումը համաօրթոդոքս սույն խորհրդակցության: Ապա ժողովը անցավ օրակարգում դրված հարցերի քննարկմանը:

Խորհրդակցությանը նախագահում էր հայ եկեղեցու ներկայացուցիչ տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանը, որը հանդես եկավ «Խոստովանել Քրիստոսին այսօր եկեղեցու ծիսական կյանքի միջոցով» գլխավոր թեմային նվիրված ֆրանսերեն լեզվով ընդարձակ զեկուցումով:

Խորհրդակցության ընթացքում ընթերցվեցին նաև հետևյալ զեկուցումները.

ա. Աստուծո խոսքի քարոզությունը պաշտամունքի միջոցով.

բ. Ծիսական ոգեկանությունն այսօր.

գ. Ծիսական կյանքի ոգեկան հիմքը:

Սույն զեկուցումները այնուհետև հանգամանորեն քննարկվեցին աշխատանքային երեք խմբերում:

Սեպտեմբերի 20-ին, շաբաթ օրը, տ. Շահե արքեպիսկոպոսի նախագահությամբ գումարվեց խորհրդակցության եզրափակիչ լիագումար նիստը, ուր քննության առնվեցին աշխատանքային խմբերի կողմից պատրաստված բանաձևերը և ընդունվեցին համապատասխան փաստաթղթեր՝ ներկայացվելու համար Նայրոբիում սույն թվականի նոյեմբերին գումարվելիք ԵՀԽ-ի 5-րդ համագումարին:

Նույն օրը, ժամը 14-ին, պատգամավորությունը ներկայացավ Ամենայն Հայոց Հայրապետին և հանձնեց Նրան խորհրդակցությունում ընդունված փաստաթղթերը: Այս առթիվ, հանուն ժողովականների, դոկտ. Էմիլիո Կաստրոն շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ ցույց տրված սրտաբաց և ջերմ ընդունելության համար:

Հայոց Հայրապետն Իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց խորհրդակցության բարեհաջող ավարտի առթիվ՝ շեշտելով քննարկված գլխավոր թեմայի կարևորությունը ծիսական արարողությունների միջոցով Քրիստոսի Ավետարանի վկայությունը բերելու մեր օրերի մարդկությանը:

Սեպտեմբերի 21-ին պատգամավորությունը Մայր տաճարում ներկա եղավ ս. պատարագի արարողությանը: Այստեղ Հայոց Հայրապետը և Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքության ներկայացուցիչ տ. Էմիլիանոս Տիմոդիատիս միտրոպոլիտը փոխանակեցին ճառեր:

Նույն օրը, ժամը 14.30-ին, համաօրթոդոքս խորհրդակցության մասնակիցների պատվին Վեհարանում Հայոց Հայրապետի կողմից տրվեց ողջերթի ճաշկերույթ, ուր փոխանակվեցին սրտագին, ջերմ ճառեր:

Սույն ընդունելությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին

ուղղեցին հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը, որը ողջունեց Սովետական Հայաստանում ներկայությունը օրթոդոքս եկեղեցիների հարգարժան ներկայացուցիչների, որոնք աշխատում են ժողովուրդների մերձեցման, փոխըմբռնման և աշխարհի խաղաղության համար:

Մայր Աթոռում գտնվելու օրերին հյուրերը այցելեցին Մայր տաճարի թանգարան, Վաղարշապատի պատմական վանքերը, եղան Գառնիում, ս. Գեղարդ վանքում, այցելեցին մայրաքաղաքի տեսարժան վայրերը, Ծիծեռնակաբերդում ծաղկեպսակ զետեղեցին և հոգեհանգստյան էկումենիկ աղոթքով հարգեցին հիշատակը հայ նահատակների:

Սեպտեմբերի 23-ին, երեքշաբթի օրը, համաօրթոդոքս խորհրդակցության ներկայացուցիչները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին ու մեկնեցին լավագույն տպավորություններով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
22-ը սեպտեմբերի 1975 թ.